

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

**ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ԳԻՏԱԿՑՎԱԾ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

Դավիթ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավ. գիտ. թեկնածու

Հայաստանի Հանրապետության 2003 թ. քրեական օրենսգրքը, իր բազմաթիվ թերություններով հանդերձ, իր ժամանակի համար կատարել է կարևոր պատմական առաքելություն՝ ապահովելով անցումը ժողովրդավարական և իրավական պետությանը բնորոշ քրեական քաղաքականության: Այնուհանդերձ, ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքն արդեն անհուսալիորեն հետ է մնացել մեր երկրի հասարակական զարգացումից՝ դիտարկված թե՛ ներքին և թե՛ արտաքին գործոնների համատեքստում: Դրանով պայմանավորված՝ քրեական օրենսգրքում շարունակաբար կատարվում են փոփոխություններ և լրացումներ: Այսպես, 2003 թվականից առ այսօր քրեական օրենսգրքում կատարվել են մոտ 300 փոփոխություններ, ընդ որում՝ դրանք ոչ միայն վերաբերում են հատուկ մասի առանձին հանցակազմերին, այլև ընդհանուր մասին: Դատական պրակտիկան իր հերթին է վեր հանում բազմաթիվ խնդիրներ, և դրանց այն մասը, որը հնարավոր է կարգավորել դատական իշխանության ունեցած սահմանադրական լիազորությունների շրջանակում, ստանում է իր լուծումը:

Սակայն ո՛չ դատական իշխանության և ո՛չ էլ օրենսդիր իշխանության հատվածական մոտեցման պարագայում ՀՀ քրեական օրենսդրության որակական կատարելագործման ու արդիականացման խնդիրը լուծել հնարավոր չէ, քանի որ այն ենթադրում է համակարգային մոտեցում, իսկ դա

ենթադրում է մշակել ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ, որի հիման վրա ստեղծել նոր օրենսգիրք:

Նոր օրենսգրքի հայեցակարգը, մեր պատկերացմամբ, պետք է լուծի մի քանի հիմնարար խնդիր:

Առաջին, քրեական օրենսդրությունը դարձնել ժամանակակից տնտեսական հարաբերություններին համահունչ: Հիմնախնդրի խորությունը և կարևորությունը այս ոլորտում պահանջում են քրեական օրենքի արմատական վերափոխում, որը չի կարող իրականացվել մասնատված նորարարություններով, և անհրաժեշտ է համալիր մոտեցում՝ քրեական օրենսգրքի բազմաթիվ դրույթների վերանայում ինչպես հատուկ, այնպես էլ ընդհանուր մասում: Դրա արդյունքում պետք է ձևավորվի հայեցակարգային նոր մոտեցում շուկայական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում: Այս իմաստով հայեցակարգի նպատակը պետք է լինի վեր հանել երկրի կարևորագույն տնտեսաիրավական խնդիրները և դրանց լուծումներ առաջարկել: Անհրաժեշտ է գտնել կարգավորիչ մասնավոր-իրավական ու հանրային-իրավական ճյուղերի՝ մի կողմից (քաղաքացիական իրավունք, հարկային իրավունք, մաքսային իրավունք և այլն), և քրեական իրավունքի՝ մյուս կողմից, հարաբերակցության նոր մոդել, որի դեպքում քրեական իրավունքը խոչընդոտներ չի ստեղծի ՀՀ տնտեսական հարաբերությունները հիմնարար սկզբունքներին՝ սեփականության իրավունքի երաշխավորմանը, պայմանագրերի ազատությանը ու ազատ ձեռներեցությանը՝ հուսալիորեն պաշտպանելով դրանք ոտնձգություններից:

Նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի առջև դրված **երկրորդ խնդիրը** վարչական և քրեական իրավախախտումների հարաբերակցության հարցի հստակ տարրոռոշումն է:

Այս առումով առկա է հարցի լուծման երկու ճանապարհ՝ կա՛մ քրեական օրենսդրությունը ներառում է նաև վարչական իրավախախտումները, այդ թվում՝ բոլոր իրավախախտումները, որոնք ներկայումս բացի ՎԻՎՕ-ից ամրագրված են նաև հարկային, մաքսային, բնապահպանական և այլ օրենսդրությամբ, կա՛մ քրեական օրենսգրքի և ՎԻՎՕ-ի միջև իրականացվում է իրավախախտումների վերաբաշխում. ոչ մեծ ծանրության մի շարք հանցակազմեր ապաքրեականացվում են, և դրանց համար նախատեսվում է վարչական պատասխանատվություն, իսկ ներկայումս վարչական համարվող իրավախախտումների այն մասը, որոնց սանկցիաները իրենց խստությամբ համապատասխանում են քրեական ոլորտին, քրեականացվում է:

Այս մոտեցումն ուղղակիորեն հիմնվում է ԵՆՆԿ-ի «Քրեական արդարադատության պարզեցման» մասին թիվ R (87) 18 հանձնարարականի վրա:

Ներկայումս տարբեր երկրներում առկա են նշված երկու մոդելներն էլ:

Քրեական և վարչական իրավահարաբերությունները գեներտիկորեն կապված են, երկուսի հիմքում էլ ընկած են կարգավորման նույն մեթոդը, առարկան, երկուսն էլ լուծում են գրեթե նույն խնդիրները և այլն: Դրա վկայությունն է այն, որ հաճախ ընդամենը իրավախախտումների օբյեկտիվ կողմի հատկանիշ համարվող հետևանքով է որոշվում՝ արարքը քրեական՞ իրավախախտում է, թե՞ վարչական:

Վարչականի և քրեականի միավորումը կամ վերաբաշխումը նախևառաջ կարևոր է ՄԻԵԿ-ի երաշխիքները բնույթով կամ սանկցիայով քրեական հանդիսացող այն իրավախախտումների վրա տարածելու

տեսանկյունից, որոնք ներկայումս ձևակերպված են որպես վարչական: Դրա արդյունքում այդպիսի արարքների համար մեղադրվող անձը կստանա պաշտպանության իրավունքի և վարութային այլ իրավունքների երաշխավորման առավել բարձր մակարդակ:

Այս հանգամանքն է շեշտադրվել, մասնավորապես, «Պայքար և հաղթանակ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԿ-ի կողմից 2007 թվականի դեկտեմբերի 20-ին կայացված վճռում: Սույն գործով ՄԻԵԿ-ն արձանագրել էր, որ «Հարկերի մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված տույժերի ու տուգանքների նպատակը հարկատուի վարքագծի պատճառով առաջացած հնարավոր ծախսերի նյութական հատուցումը չէ, այլ հարկատուների նկատմամբ ճնշում գործադրելն է, որպեսզի վերջիններս կատարեն իրենց իրավական պարտավորությունները, ինչպես նաև այդ պարտավորությունները խախտելու համար նրանց պատժելն է: Այսպիսով, սանկցիաները և՛ կանխարգելիչ են, և՛ պատժիչ: Նշված հանգամանքը ՄԻԵԿ-ը բավարար է համարել իրավախախտման *քրեական* բնույթը հաստատելու համար՝ եզրահանգելով, որ այդպիսի իրավախախտման համար մեղադրվող անձը պետք է օժտված լինի արդար դատաքննության կոնվենցիոն երաշխիքների ողջ համակարգով:

Տուգանքի վերաբերյալ ՄԻԵԿ-ի դատողություններում համոզվելու համար դիտարկենք, օրինակ, ՎԻՎՕ-ի 48-րդ հոդվածի սանկցիան: Նշված հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում պետական և/կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու համար և առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի 2500-պատիկի չափով: Այդ չափը շուրջ 85 անգամ ավելին է,

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

քան քրեական օրենսգրքով նախատեսված տուգանքի նվազագույն չափը:

Քրեական և վարչական իրավահարաբերությունների հարաբերակցության փոփոխումը հանգեցնելու է նրան, որ անհրաժեշտություն կառաջանա վերանայելու նախ՝ հանցագործության սուբյեկտի հասկացությունը (իրավաբանական անձին հանցագործության սուբյեկտ դիտելու մասով), երկրորդ՝ հանցակազմերը, երրորդ՝ սանկցիաները, չորրորդ՝ հանցագործությունների դասակարգման չափանիշները և այլն: Օրինակ՝ քրեական օրենսգրքով նախատեսված ոչ մեծ ծանրության արարքներ կատարած անձին «հանցագործ» պիտակով խարանելը, կարծում ենք, պետք է համարվի աննպատակահարմար, ուստի պետք է առավել մեղմ քրեական իրավախախտումները «զանցանք» անվանադրելու հարցը:

Երրորդ՝ ներկայումս հստակ մշակված հայեցակարգի հիման վրա իրականացվում են քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կազմման աշխատանքներ: Դրա քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում ամրագրված են բազմաթիվ նոր ինստիտուտներ, որոնք անհրաժեշտորեն պահանջում են քրեական օրենսդրության բազմաթիվ ինստիտուտների վերանայում: Հակառակ դեպքում կառաջանա հակասություն քրեական և քրեադատավարական օրենսդրության միջև, և դատավարական նորմերը կարող են չիրագործվել: Այսպես, գործող քրեական օրենսդրությունը հիմնված է պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի վրա, մինչդեռ քրեական դատավարության նոր օրենսգրքում նախատեսվելու են ինստիտուտներ, որոնք հիմնված են քրեական պատասխանատվության նպատակահարմարության

սկզբունքի վրա: Սա նշանակում է, որ քրեական օրենսդրությունը այս առումով ևս պետք է հիմնարար փոփոխությունների ենթարկել:

Չորրորդ՝ ԴՅ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում ԴՅ միջազգային պայմանագրերը: Սակայն մի շարք միջազգային իրավական ակտերում ամրագրված քրեաիրավական հարաբերություններին վերաբերող նորմերը պատշաճ իմպլեմենտացիայի չեն ենթարկվել ԴՅ քրեական օրենսդրությամբ, օրինակ՝ կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող կոնվենցիաները, ինչը արձանագրվել է ԳՐԵԿՕ-ի խմբի կողմից:

Հինգերորդ՝ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում կրիմինոլոգիայում և քրեական իրավունքի գիտության մեջ արձանագրված նոր մոտեցումների համատեքստում անհրաժեշտ է ԴՅ քրեական օրենսգրքի փիլիսոփայությունը համալրել «վերականգնողական արդարադատության» գաղափարներով: Վերականգնողական արդարադատությունը հանցագործությունը դիտում է առավելապես իբրև տուժողին վնասի պատճառում, այլ ոչ թե քրեական իրավունքի նորմի խախտում: Այսինքն՝ վերականգնողական արդարադատության գաղափարի հիմքում ընկած է այն մոտեցումը, որ հանցագործությունը, լինելով ոսոնծություն կոնկրետ անձանց նկատմամբ, չպետք է դիտարկել միայն հանրային նշանակություն ունեցող արարք: Վերականգնողական արդարադատության անկյունաքարն է տուժողի պահանջները պարզելը և հաշվի առնելը, իսկ քրեական քաղաքականության կարևորագույն խնդիրն է պատճառված վնասի հատուցումը:

Այս հասկացությունը նախևառաջ ենթադրում է հանցագործության և դրա համար պատասխանատվության հայեցակարգերի հիմնային վերանայում՝ առաջին տեղում դնելով հանցագործությունից տու-

ժողովների շահերը: Այսինքն՝ ըստ վերականգնողական արդարադատության հայեցակարգի՝ տուժողը դառնում է քրեախրավական հարաբերության լիարժեք մասնակից: Այս հայեցակարգի ներմուծման արդյունքը լինելու է այն, որ տուժողը քրեական օրենսգրքում պետք է հստակ տեղ և դեր ունենա, իսկ քրեական պատիժը պետք է նպատակամղված լինի առաջին հերթին հենց տուժողի շահերի բավարարմանը: Այս տեսանկյունից անհրաժեշտություն կառաջանա տուժողի իրավավիճակի ամրագրում քրեական օրենսգրքում, ինչպես նաև այնպիսի պատիժների սահմանում, որոնք կիրառվելու են տուժողի օգտին: Վերջին մոտեցումն ուղղակիորեն ամրագրված է միջազգային փաստաթղթերում, մասնավորապես ՄԱԿ-ի 1985 թվականի «Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» հռչակագրում, ԵԽՆԿ 1985 թվականի «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» N R (85) 11 հանձնարարականում և այլն: Հռչակագրի 9-րդ կետում մասնավորապես սահմանված է, որ կառավարությունները պետք է քննարկեն *ռեստիտուցիան* իրենց օրենսդրություն և պրակտիկաներ մուծելու հնարավորությունը: Իսկ ըստ N R (85) 11 հանձնարարականի 11-րդ կետի՝ օրենսդրությունը պետք է նախատեսի, որ *փոխհատուցումը* կա՛ն քրեական պատիժ է, կա՛ն դրան փոխարինող կա՛ն լրացնող միջոց:

Վեցերորդ՝ ներկայումս տեղի են ունենում պատժի համակարգի վերանայման լայնածավալ աշխատանքներ: Փորձ է արվում գտնել ազատագրված այլընտրանքային պատիժներ, որոնցով հնարավոր կլինի ապահովել պատժի նպատակների իրականացումը: Սա ենթադրում է հստակ մշակված հայեցակարգ, որպեսզի հանցագործությունների և դրանց նկատմամբ կիրառվող պատիժները լինեն համաչափ, այ-

սինքն՝ անհրաժեշտ է քրեական օրենսգրքի հիմքում դնել՝ «**Հանցագործության և պատժի համաչափության**» սկզբունքը, ինչը ենթադրում է քրեական բոլոր սանկցիաների վերանայում: Բացի այդ, վերանայման են ենթակա պատժից ազատելու և օրենքով սահմանվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերը և ընթացակարգերը:

Վերջին տարիներին առանձին հանցակազմերի արդիականացմանն ուղղված միջոցներ է ձեռնարկել ՀՀ վճռաբեկ դատարանը՝ իր իրավական դիրքորոշումներով փերձելով լուծում տալ որոշ հասունացած իրավական խնդիրների:

Այսպես, խարդախությանը վերաբերող *Լիա Ավետիսյանի* գործով որոշման հիմքում վճռաբեկ դատարանը դրեց սեփականության և տնտեսական ոլորտում հանցավորության վերաբերյալ նոր դատական քաղաքականության հետևյալ սկզբունքները.

ա) Սեփականության իրավունքի համարժեք իրավական երաշխավորման անհրաժեշտություն: Սեփականության անձեռնմխելիությունը ոչ միայն հիմնարար սահմանադրական արժեք է, այլ նաև ՀՀ տնտեսական համակարգի՝ շուկայական տնտեսության հիմնասյուներից մեկը: Իրավունքը պետք է երաշխավորի, որ անձը չի կարող զրկվել իր սեփականությունից, եթե այն ձեռք է բերել բարեխղճորեն և պատշաճ իրավական ընթացակարգի պահպանմամբ:

բ) Քաղաքացիական շրջանառության օրենքով սահմանված ընթացակարգերի, այդ թվում՝ պայմանագրերի կնքման իրավական պահանջների պահպանման և իրավական երաշխավորման անհրաժեշտություն: Այդ ընթացակարգերի չպահպանման ռիսկն առաջին հերթին պետք է կրի ոչ թե պետությունը, այլ իրավական ընթացակարգերը չպահպանող անձը:

գ) Մասնավոր-իրավական վեճերի լուծման մասնավոր-իրավական միջոցները

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

հանրային-իրավական գործիքակազմով փոխարինելու անթույլատրելիությունը: Քանի որ պայմանագրային իրավունքից (մասնավոր իրավունքից) բխող վեճերի պարագայում հանրային շահն էապես ավելի փոքր է, քան մասնավոր շահերը, ուստի հանրային-իրավական գործիքակազմի ներգրավումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքերում, երբ բարձր ու համարժեք ապացուցողական չափանիշով հիմնավորվում է, որ տվյալ կոնկրետ դեպքում առկա է շոշափելիորեն ավելի մեծ հանրային շահ:

Այնուհանդերձ, անհրաժեշտ է կրկին ընդգծել, որ ՀՀ դատական իշխանության տրամադրության տակ եղած միջոցներն ամենևին բավարար չեն հարցին առավել համապարփակ, համակարգային լուծում տալու համար: Դա պահանջում է արմատական օրենսդրական միջամտություն, և մենք հուսով ենք, որ վերը ներկայացված սկզբունքները կփոխարինեն խորհրդային ծագում ունեցող առկա մոտեցումներին և կդրվեն նշված ոլորտում նոր քրեական քաղաքականության հիմքում:

Շարունակելով խարդախության հանցակազմի քննարկումը՝ կարծում ենք, արտասահմանյան երկրների դրական փորձից ելնելով, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում առանձին հոդվածներով սահմանել ապահովագրական խարդախությանը վերաբերող առանձին հանցակազմ, ինչպես նաև խարդախության այլ մասնավոր դրսևորումներ՝ որպես ինքնուրույն հանցակազմեր, օրինակ, համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով խարդախությունը (ճապոնիա), չեկային և վարկային քարտերի կամ վճարային այլ փաստաթղթերի միջոցով կատարվող խարդախությունը, խաբեությամբ որևէ ծառայություն ստանալը (Շվեյցարիա): Բացի այդ,

քանի որ ՀՀ-ում առավել տարածված են խարդախության դեպքերը ազգակցական կապեր ունեցող անձանց միջև՝ առաջարկում ենք Շվեյցարիայի օրինակով ազգականին կամ ընտանիքի անդամին վնաս պատճառած խարդախությունը դիտել որպես մասնավոր մեղադրանքի գործ:

Խարդախության հանցակազմից բացի, իրավակիրառ պրակտիկայի համար խնդիրներ է առաջացնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված՝ խուլիգանության հանցակազմը: Վերջինս այնպես է կառուցված, որ այն վերածվել է բազմօբյեկտ հանցագործության. որպես հիմնական անմիջական օբյեկտ ներկայացվում է հասարակական կարգի պահպանության հետ կապված հասարակական հարաբերությունները, իսկ որպես լրացուցիչ անմիջական օբյեկտ՝ անձի կյանքի և առողջության, սեփականության, պատվի և արժանապատվության հետ կապված հասարակական հարաբերությունները: Այսինքն, ստացվում է մի իրավիճակ, երբ մի շարք այլ հանցակազմեր դադարում են լիարժեք գործել: Այս հանգամանքը հաշվի առելով՝ կարծում են, անհրաժեշտ է խուլիգանության հանցակազմի դիսպոզիցիայում թվարկել օբյեկտիվ կողմի որոշ հատկանիշներ, օրինակ՝

– հասարակական անկարգություններ հրահրելը, որը հանգեցրել է աշխատանքային, արտադրական, տնտեսական, մանկավարժական և գիտահետազոտական գործունեության նորմալ իրականացման անհնարինության,

– տրանսպորտային կայաններում, քաղաքացիական ավիացիայի օդանավայաններում, շուկաներում, պուրակներում, այգիներում, կինոթատրոններում, ցուցասրահներում, մարզադաշտերում և այլ հասարակական վայրերում անկարգություններ հրահրելը,

– տրանսպորտային հաղորդակցության զանգվածային շրջափակելը կամ կազմա-

լուծելը, պետական մարմինների կամ հասարակական կարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնող աշխատակիցներին հակադրվելը կամ խոչըդոտելը,

– զանգվածային ծեծկռտուք հրահրելը, ուրիշի հասցեին ոչ ցենզուրային հայիոյելը, հասարակական վայրում տնական աղմկելը (Չինաստան):

Հարկ ենք համարում ընդգծել, որ վերոնշյալ առաջարկությունից հետո խուլիգանության հանցակազմի ծանրացնող մի շարք հանգամանքներ ինքնըստինքյան անհրաժեշտ կլինի ապաքրեականացնել և խուլիգանական շարժառիթը նախատեսել դրանց համապատասխան հողվածներում որպես ծանրացնող հանգամանք:

Ներկայացված նոտեցումը համապատասխանում է իրավական որոշակիության եվրոպական սկզբունքին: Այս պայմաններում օրենքը էապես սահմանափակում է ոչ ողջամիտ հայեցողություն դրսևորելու՝ իրավակիրառողների հնարավորությունները, ինչն իր հերթին հանգեցնում է *nullum crimen sine lege* հանրաճանաչ սկզբունքի առավել ամբողջական կենսագործման:

Խնդրահարույց է նաև գործող պատժի համակարգը: Այս կապակցությամբ կցանկանալի անդրադառնալ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հողվածներին: Մասնավորապես.

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հողվածից բխում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը կիրառվում այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի հատուկ մասի հողվածով սահմանված պատժի տեսակը կամ նվազագույն պատժաչափը որոշակի հանգամանքների ուժով համարվում են անհամաչափ խիստ, ակնհայտ անարդար:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հողվածի իմաստով՝ պայմանական դատապար-

տությունը կարող է կիրառվել ինչպես ոչ մեծ ծանրության, այնպես էլ միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց պատժից ազատելու համար: Ավելին՝ գործող քրեական օրենսգրքում նշում չկա այն մասին, թե առավելագույն ինչ չափի պատժի դատապարտելու դեպքում այն կարող է կիրառվել: Օրինակ, կարող է կիրառվել 20 տարի ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ, թե՞ ոչ:

Մեջբերված քրեաիրավական դրույթներից բխում է, որ մեր երկրի քրեական օրենսգրքով սահմանված են օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու բավական խիստ չափանիշներ, մինչդեռ պատիժը պայմանականորեն չկիրառելու իմաստուտը կիրառելու օրենսդրական սահմանափակումները շատ մեղմ են, օրենքի իմաստով՝ պատիժը պայմանականորեն կարող է չկիրառվել ցանկացած հանցագործություն կատարած անձի նկատմամբ:

Կարծում ենք, այս հարցում առկա է օրենսդրական պատճառներով պայմանավորված անարդարացի վիճակ. պատժից ազատելու չափանիշն ավելի ցածր է, քան օրենքով սահմանվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու չափանիշը: Այս պայմաններում, կարծում ենք, խաթարվում է քրեական քաղաքականության տրամաբանությունը: Ասվածում համոզվելու համար անդրադառնանք վիճակագրական տվյալներին, որոնց համաձայն 2010 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հողվածի կիրառմամբ պատիժ է նշանակվել ընդամենը 54 անձի նկատմամբ: Մինչդեռ 70-րդ հողվածի կիրառման դեպքերը շեշտակի ավելի շատ են՝ 920 անձ:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ կարծում ենք, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու խստիտուտի հիմնարար փոփոխությունները պետք է նե-

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

րառեն հետևյալը.

1. ՀՀ գործող քրեական օրենսգրքում պետք է նախատեսվի բացառիկ հանգամանքների առկայության դեպքում ազատազրկմանը վերաբերող պատժատեսակը ազատազրկման հետ չկապված պատժատեսակով (տուգանքով, հանրային աշխատանքներով և այլն) փոխարինելու կառուցակարգ և ընթացակարգ:

2. Ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ, այնպես էլ վերը առաջարկված նոր դրույթում պետք է սահմանել հանգամանքի բացառիկությունը գնահատելու որոշակի չափանիշներ՝ սպառիչ թվարկմամբ: Օրինակ՝

- այն նվազեցնում է հանցավորի հանրային վտանգավորությունը.

- հանցանք կատարած անձի անչափահաս լինելը՝ պայմանով, որ օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելու դեպքում կապահովեն պատժի նպատակները (տե՛ս, օրինակ, Լեհաստանի, Շվեդիայի, Դանիայի փորձը).

- մեղսունակությունը չսահմանափակող կամ չբացառող հոգեկան հիվանդության առկայությունը (տե՛ս, օրինակ, Ճապոնիայի փորձը).

- հանցանք կատարած անձը գործուն գղջացել է (տե՛ս, օրինակ, Լեհաստանի և Շվեյցարիայի փորձը)

- հանցանքը նյութական ծանր պայմաններից ելնելով կատարելը (տե՛ս, օրինակ, Շվեյցարիայի փորձը)

- սահմանված նվազագույն պատիժը չափազանց խիստ է (տե՛ս, օրինակ, Չինաստանի, Բուլղարիայի, Լեհաստանի փորձը)

- հանցագործության հետևանքով հանցանք կատարած անձը այնպիսի վնաս է կրել, որ սահմանված նվազագույն պատիժն անգամ կարող է անհամաչափ լինել

- հանցանքը սպառնալիքի ազդեցության տակ կատարելը:

3. Ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ, այնպես էլ վերը առաջարկված նոր հոդվածում պետք է սահմանել ազատազրկման հետ կապված և ազատազրկման հետ չկապված պատիժների մեղմացման կանոններ:

4. ՀՀ գործող քրեական օրենսգրքում պետք է ավելացնել ոչ միայն ազատազրկման հետ կապված, այլ նաև այլ պատժատեսակների դեպքում պայմանական դատապարտության ինստիտուտի կիրառման հնարավորությունը:

5. Պետք է ամրագրել որոշակի սահմանափակումներ պայմանական դատապարտություն կիրառելու հարցում: Մասնավորապես, առաջարկում են պատիժը պայմանականորեն կիրառելու արգելք սահմանել

- ռեցիդիվի դեպքում (տե՛ս Չինաստանի, Շվեյցարիայի, Տաջիկստանի, Մոլդովայի փորձը)

- ծանր և առանձնապես ծանր հանցագործության դեպքում (տե՛ս Տաջիկստանի, Բելոռուսի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի փորձը):

6. Պետք է հստակ թվարկել այն պարտականությունները, որոնք կարող են դրվել անձի վրա և որոշակիացնել այդ պարտականությունները չկատարելու հետևանքները: Ավելին, անհրաժեշտ է ստեղծել պայմաններ որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու համար, օրինակ, պետական որոշակի հաստատություններում սահմանել անվճար ուսուցում անցնելու հնարավորություն, ժամանակ տրամադրել դատապարտյալին աշխատանք գտնելու համար, եթե այդ ժամկետում նա չի գտնում համապատասխան աշխատանք, ապա նրան տեղական ինքնակառավարման մարմիններում ապահովել աշխատանքով: Թունամոլությունից, ալկոհոլամալությունից բուժման կուրս անցնելու իրական դարձնելու նպա-

տակով սահմանել անվճար բուժման համակարգ և այլն: Անձի վրա որևէ պարտականություն դնելիս դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի այն հանգամանքը, թե կարող է անձը կատարել այդ պարտականությունները, թե ոչ:

7. Պետք է խստացնել պարտականությունները չկատարելու կամ փորձաշրջանի ընթացքում հանցանք կատարելու դեպքում պայմանական դատապարտությունը վերացնելու խստացված ռեժիմ, մասնավորապես՝ անձի համար սահմանել լրացուցիչ պարտականություններ՝ երկարացնելով փորձաշրջանի ժամկետը:

ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխությունների մասին խոսելիս հաճախ կարծիքներ են հնչում այն մասին, որ քրեական օրենսգրքը կարելի է ենթարկել ընթացիկ փոփոխությունների ու լրացումների, և դրա ամբողջական փոփոխության անհրաժեշտություն չկա: Մինչդեռ, փորձը ցույց է տալիս, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ տարբեր ժամակահատվածներում կատարված փոփոխությունները և լրացումները կատարվում են տարբերայնորեն, հախուռն կերպով և գերծ չեն գերատեսչական շահերից, ուստի կիրառման առումով խնդիրներ են առաջացնում և խաթարում օրենսգրքի կառուցվածքն ու տրամաբանությունը:

Ասվածում համոզվելու համար անդրադառնանք ՀՀ քրեական օրենսգրքի բոլորովին վերջերս՝ 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված և 2011 թվականի մայիսի 25-ին ուժի մեջ մտած փոփոխություններին և լրացումներին: Այսպես, նշված փոփոխությունների 14-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ պարբերության մեջ որպես զգալի չափ սահմանել զողության միջոցով հափշտակություն կատարելու պահին ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ յուրացման, վատնման, պաշտոնեա-

կան դիրքի չարաշահման միջոցով հափշտակություն կատարելու դեպքում՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը:

Մեջբերված դրույթներից երևում է, որ սահմանված չէ զգալի չափ խարդախության, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակության, գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմերի համար: Եթե պաշտոնական դիրքի չարաշահման համար, ինչպես նշվում է օրենքի փոփոխության մեջ, զգալի է համարվում նվազագույն աշխատավարձի 30-ապատիկը գերազանցող գումարը, ապա հարց է ծագում, թե ինչպե՞ս պետք է մեկնաբանել պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդված), որն էական վնաս է համարում նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումարը: Արդյո՞ք դրանից հետևում է, որ 30-ից 500-ապատիկ գումարի դեպքում քրեական պատասխանատվություն չի նախատեսվում:

Վերոգրյալից բացի, իրավակիրառողի համար անհասկանալի է, թե ինչ պետք է հասկանալ «պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով հափշտակություն» ասելով, քանի որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում նման հանցակազմ առկա չէ, օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում բացառապես պաշտոնական լիազորությունների չարաշահման և պաշտոնական լիազորությունների սահմաններն անցնելու համար:

Բացի այդ, պրակտիկ խնդիրներ է առաջացնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխված՝ 55-րդ հոդվածի 5.1-րդ մասը: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, ինչպես նաև գույքի բռնագ-

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

րավունք կիրառվում են միայն որպես լրացուցիչ պատիժներ»: ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության»:

Շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, կիրառվում է դատապարտյալին սեփականության իրավունքով պատկանող գույքի կամ դրա մի մասի նկատմամբ և դրսևորվում է այդ գույքը հօգուտ պետության վերցնելու եղանակով: Գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, որևէ դեպքում չի ենթադրում հանցագործության արդյունքում ձեռք բերված գույքի կամ հանցագործության առարկայի բռնագրավում:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված և 2011 թվականի մայիսի 25-ին ուժի մեջ մտած օրենքի 3-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը լրացվել է 5.1-րդ մասով, որի համաձայն՝

«5.1. Սույն օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաների, իսկ վերջիններիս բացակայության դեպքում դրանց արժեքի բռնագրավումը պարտադիր է»:

Այս դրույթի նկատմամբ կիրառելով գույքի բռնագրավման վերաբերյալ վերոշարադրյալ մեկնաբանությունը՝ կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածում 5.1-րդ մասի նախատեսմամբ խաթարվել է գույքի բռնագրավման՝ որպես

լրացուցիչ պատժատեսակի էությունը, քանի որ նշված դրույթի ուժող գույքի բռնագրավումը տարածվում է նաև դատապարտյալին չպատկանող գույքի՝ մաքսանենգության առարկայի նկատմամբ:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ազատագրվման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելիս կարող են նշանակվել լրացուցիչ պատիժներ, բացի գույքի բռնագրավումից»:

ՀՀ քրեական օրենսգրքի վկայակոչված նորմի վերլուծությունից երևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ նշանակվող լրացուցիչ պատիժներից բացառություն է նախատեսված միայն գույքի բռնագրավման համար: Այլ կերպ՝ անձի նկատմամբ նշանակված ազատագրվման ձևով պատիժը չի կարող պայմանականորեն չկիրառվել, եթե նրան մեղսագրվող արարքի համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայով որպես լրացուցիչ պատիժ նախատեսված է գույքի բռնագրավումը:

Այսինքն, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածում 5.1-րդ մասի նախատեսմամբ արգելք է դրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն՝ մաքսանենգություն կատարած անձի նկատմամբ նշանակված ազատագրվման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու վրա, ինչը հակասում է պատժի հետ կապված հարաբերությունները կարգավորող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածներին:

Իմ կողմից նշված խնդիրն առկա է ոչ միայն մաքսանենգության, այլ նաև փողեքի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցակազմերի դեպքում:

Այսպիսով, նշված օրինակների վրա փորձեցինք ՀՀ գործող քրեական օրենսգր-

քի կոնկրետ դրույթների օրինակով հիմնավորել նոր քրեական օրենսգրքի մշակման անհրաժեշտությունը՝ նոր հայեցակարգի հիման վրա: Օրենսդրության զարգացման այս մոդելը ընտրելու պարագայում (այն արդեն փորձարկվում է նոր քրեական դատավարության օրենսգրքի մշակման ընթացքում) անհրաժեշտ է նաև համարժեք օգտագործել գիտության ներուժը: Դա ենթադրում է, որ նախ անհրաժեշտ է որոշել երկրի համար առաջնային նշանակություն ունեցող ոլորտները, հետո ասպիրանտների հետազոտության թեմաները հաստատել՝ ելնելով այդ ոլորտները զարգացնելու հանգամանքից: Ընդ որում՝ անհրաժեշտ է կազմակերպել, օրինակ, ասպիրանտների այնքան ընդունելություն, որքան անհրաժեշտ է հետազոտություն անցկացնելու համար:

Քրեական օրենսգրքի հայեցակարգի մշակման ընթացքում նաև անհրաժեշտ է հրաժարվել այսպես կոչված «գրանտային օրենսդրության» պրակտիկայից, որպեսզի հնարավոր լինի ապահովել արդյունավետ օրենսդրական դաշտի ձևավորումը: Դրա

փոխարեն, հայեցակարգը արդյունավետ կարող են մշակել տեղական գիտնականները՝ արտասահմանյան փորձագետների աջակցությամբ:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է հայեցակարգի մշակման աշխատանքներին ներգրավել նաև կրիմինոլոգների և սոցիոլոգների, որոնք համապատասխան հետազոտություններ կատարելու և դրանց արդյունքներն ամփոփելու միջոցով կկարողանան նպաստել հայեցակարգի առավել մեծ ամբողջականություն և ադեկվատություն ապահովելուն:

Ամփոփելով զեկուցումը՝ ցանկանում եմ ևս մեկ անգամ ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսդրության հայեցակարգային, համակարգված, գիտականորեն հիմնավորված բարեփոխումն անհրաժեշտություն է, բացի այդ, կարծում եմ՝ ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխության համար անհրաժեշտ է ձևավորել մի մարմին, որն երաշխավորմամբ այդ փոփոխությունը և ընդհանրապես յուրաքանչյուր այլ օրենսդրական փոփոխություն կամ լրացում կմտնեն Ազգային ժողով: